

Սմբատ Մինասյան
*ՀՀ Փաստաբանների պալատի անդամ,
Եվրասիա միջազգային համալսարանի Իրավագիտության,
քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների
ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ smbmin85@mail.ru*

DOI: 10.53614/18294952-2025.2-51

ՈՐՈՇԱԿԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՂՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ

Սույն հոդվածում ուսումնասիրության առարկա է «որոշակիության» հասկացության համապարփակ վերլուծությունը՝ որպես սահմանադրական սկզբունք և սահմանադրական արժեք: Հետազոտությունը բացահայտում է որոշակիության գաղափարի տեսական և գործնական հիմքերը՝ սկսած մասնավոր իրավունքի շրջանակում դրա ձևավորումից մինչև ժամանակակից սահմանադրական իրավունքում դրա ինստիտուցիոնալ դերը: Վերլուծվում են իրավական որոշակիության զարգացման երեք փուլերը՝ մասնավոր իրավական, միջմիջադրական և սահմանադրական, ներկայացվում են տարբեր իրավական համակարգերում և դատական պրակտիկայում (հատկապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի) դրա դրսևորումները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում որոշակիության սկզբունքի և արժեքի տեղին Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգում՝ այն դիտարկելով որպես իրավական պետության, ժողովրդավարության, սոցիա-

լական պետության և ինքնիշխանության կառուցվածքային հիմք: Հոգվածում հիմնավորվում է այն թեզը, որ իրավական որոշակիությունը ոչ միայն գործիքային սկզբունք է, այլ նաև սահմանադրական ինքնության բաղադրիչ և մարդու հիմնա-րար իրավունքների արդյունավետ պաշտպանության նախա-պայման:

Հիմնաբառեր. որոշակիություն, սահմանադրական սկզբունք, սահմանադրական արժեք, իրավական կանխատե-սելիություն:

Ներածություն

Աշխարհում ամեն բան որոշակի է այն ժամանակ, երբ հստակ են սահ-մանները, ժամանակը, տեղն և քայլերը: Որոշակիությունը մարդկանց տալիս է վստահություն և հնարավորություն՝ ինքնուրույն ու համարժեք գործողու-թյուններ կատարելու կյանքում: Որոշակիությունը կյանքի և իրավունքի հիմ-քում է. առանց հստակ սահմանների՝ թե՛ օրենքը, թե՛ մարդու գործողություն-ները կարող են կորցնել իրենց արժեքը և նշանակությունը: Ժամանակակից իրավական համակարգերում որոշակիությունը հանդիսանում է իրավունքի կայունության, կանխատեսելիության և վստահելիության հիմնարար պայ-ման: Իրավական նորմերի հստակությունը, իրավական հետևանքների կան-խատեսելիությունը և պետական իշխանության գործողությունների սահմա-նափակվածությունը իրավունքի միջոցով ձևավորում են այն միջավայրը, որտեղ անհատը կարող է իրականացնել իր ազատությունները՝ վստահ լի-նելով իրավական պաշտպանության արդյունավետությանը:

Հոգվածի նպատակն է վերլուծել որոշակիության գաղափարը՝ բացահայ-տելով դրա տեսական և իրավաբանական բովանդակությունը, պատմական զարգացումը և սահմանադրական նշանակությունը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում որոշակիության՝ որպես սահմանադրական սկզբունքի և սահմանադրական արժեքի երկակի բնույ-թին, ինչպես նաև դրա դերին իրավական պետության, ժողովրդավարության, սոցիալական պետության և ինքնիշխանության իրացման համատեքստում:

Մեթոդ

Ուսումնասիրության իրականացման շրջանակներում կիրառվել են ինչ-պես ընդհանուր գիտական, այնպես էլ իրավական մեթոդները: Մասնավո-րապես, մեր կողմից կիրառվել են՝ պատմաիրավական մեթոդը, որով ու-սումնասիրվել է որոշակիության սկզբունքի ձևավորումն ու զարգացումը հռոմեական մասնավոր իրավունքից մինչև ժամանակակից սահմանադրա-կան իրավունքը, դոգմատիկ-իրավական վերլուծության մեթոդը, որն օգտա-գործվել է սահմանադրական նորմերի բովանդակության մեկնաբանման համար, համեմատաիրավական մեթոդը, որի միջոցով համադրվել են տար-բեր պետությունների սահմանադրական կարգավորումները և իրավական

դոկտրինները, դոկտրինալ վերլուծության մեթոդը, որը կիրառվել է՝ հայ, ռուս և արևմտյան իրավագետների տեսական մոտեցումների ուսումնասիրման համար:

Որոշակիության սահմանադրական սկզբունքի պատմական զարգացումը և դոկտրինալ ձևավորումը

Որոշակիության սահմանադրական սկզբունքը պատմականորեն ձևավորվել է ոչ թե հանրային իրավունքի, այլ մասնավոր իրավունքի շրջանակներում, որը բխում էր մասնավոր գործարքների կայունության, սեփականության պաշտպանության և քաղաքացիական շրջանառության կանխատեսելիության պահանջներից: Ժամանակի ընթացքում այս մասնավոր իրավական սկզբունքը խորացավ, ընդլայնվեց և վերափոխվեց՝ դառնալով սահմանադրական իրավակարգի հիմնասյունը, իրավական պետության հայեցակարգի և մարդու իրավունքների երաշխիքների կենտրոնական տարրը: Իրավագիտական մասնագիտական գրականության մեջ, ինչպես օրինակ՝ Զ. Գորդլեյի, Ն.Լասեյի, Ռ.Ալեքսի և այլոց աշխատություններում իրավացիորեն ընդունված է որոշակիության զարգացման փուլերը բաժանել երեք խոշոր փուլերով՝ մասնավոր իրավական, միջճյուղային և սահմանադրական (Gordley, 1991, էջ 15–44, Lacey, 2016, էջ. 101–142, Alexy, 2002, էջ 47–76, Gardbaum, 2013, էջ 89–121):

Զարգացման առաջին՝ մասնավոր իրավունքի փուլի ընթացքում ձևավորվում են իրավական որոշակիության սկզբունքի ակունքները: Այն կապված է Հռոմեական մասնավոր իրավունքի հետ, որտեղ, ըստ Ի.Վ. Ռեյստինայի, որոշակիությունը՝ *res judicata* սկզբունքը դիտվում էր որպես գործարքների ուժի, պարտավորությունների ծավալի և իրավունքների պաշտպանության նախապայման (Рехтина, 2022): Այստեղ ձևավորվեց այն ընկալումը, որ իրավահարաբերությունների կայունությունն ու կանխատեսելիությունը կառուցվածքային հիմք են արդարության և իրավական անվտանգության համար:

Իրավական որոշակիությունը Հռոմեական իրավական գործընթացներում օրինակ՝ ապահովվում էր տարբեր տեսակի դատավարական ժամկետների սահմանմամբ: Հետաքրքրական էր Հին Հռոմի իրավունքի աղբյուր հանդիսացող Տասներկու աղյուսակների օրենքները (Ք.ա. 451–450 թթ.), որտեղ նշվում էր արդարադատության կատարման առավելագույն ժամկետը. «Հարավից հետո (մագիստրատը) հաստատում է այն կողմի պահանջը, որը ներկա է դատավարությանը: Եթե երկու կողմերն էլ ներկա են, թող արևի մայրամուտը լինի (դատավարության) վերջին ժամկետը» (Хрестоматия по истории древнего Рима, 1962, էջ 68): Գայուսի Ինստիտուտների IV գրքում (2-րդ դար) նշվում է, որ «Քաղաքացիական (իրական) դատարանները՝ ըստ Յուլիուսի օրենքի, որը սահմանում է իրավասության ընդհանուր կանոնները, դադարեցնում են իրենց գործողությունը, եթե չեն ավարտվել մեկ տարի ու վեց ամիսների ընթացքում» (Хрестоматия по всеобщей истории государства

и права, 2006, էջ 79): Յուստինիանոսի Դիգեստների V գրքի I գլխում (6-րդ դար) ամրագրվում էր, որ պատասխանողի կողմից երեք անգամ բացակայության դեպքում դատարանը, որպես կանոն, լուծում է գործը հայցվորի օգտին (Кофанов, 2002, էջ 11):

«Res judicata» տերմինը օգտագործվելով Հռոմեական իրավունքի նորմերում, բառացի լատիներենից թարգմանաբար նշանակել է «լուծված գործ» կամ «գործ, որի վերաբերյալ դատական որոշում է կայացվել» (Кофанов, 2002, էջ 27):

Ըստ գերմանացի իրավաբան Ռ.Զիմմերմաննի հին հռոմեական իրավունքում այս տերմինը չուներ այն իմաստը, որը այսօր ընդգրկում է նրա մեջ իրավաբանական պրակտիկայում: Երբ կայացվում էր sententia (պատասխանողի դատապարտում կամ արդարացում), գործի առարկան համարվում էր լուծված՝ res judicata (Zimmermann, 1996, էջ 661-666):

Ըստ իրավաբան՝ Ա. Բարկովսկիյի և Փ. Փլեսսիսի մեկնաբանության՝ Հուստինիանոսի Դիգեստները ամրապնդում էին, որ «գործը, որի վերաբերյալ դատական որոշում է կայացվել, կոչվում է այնպիսի գործ, որտեղ դատավորի արտահայտությունը վերջ դրեց վեճին՝ այն հասնում է կամ մեղավորությանը, կամ արդարացմամբ» (Plessis, 2005, էջ 237-239):

Այսպիսով, «Res judicata»-ն որպես հասկացություն անմիջապես առաջացել է հռոմեական իրավունքից՝ կապված դատական որոշումների և դրանց իրավական ուժի հետ և տերմինոլոգիական առումով ապահովում էր դրանց գործառնությունը (Рехтина, 2022):

Մասնավոր իրավունքի փուլի ամփոփումը դրսևորվեց Ֆրանսիայի 1804 թ.և Գերմանիայի 1896թ.Քաղաքացիական օրենսգրքերում: Աստիճանապես ինստիտուցիոնալացվեցին որոշակիության պահանջները՝ ամրապնդելով նորմերի հստակությունը, կողմերի իրավաչափ ակնկալիքների պաշտպանությունը և գույքային հարաբերությունների կայունությունը: Այսպես, օրինակ՝ Ժ.Լ.Հալպերին ներկայացնում է Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքում սեփականության իրավունքը, որպես օրենսդրության «առանցքի»՝ շեշտադրելով իրավական որոշակիության և կայունության սկզբունքները (Halperin, 2012, էջ 35-78): Ռ.Զիմմերմանն էլ ներկայացնում է Հռոմեական իրավունքից ձևավորված այս սկզբունքի ներթափանցումը և ազդեցությունը Գերմանիայի քաղաքացիական օրենսդրության մեջ (Zimmermann, 2012, էջ 463-485):

Այսպիսով, որոշակիության սկզբունքի մասնավոր իրավունքից դեպի սահմանադրական սկզբունքի անցումը պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Սկզբնականում ձևավորվելով մասնավոր իրավունքում նպատակն էր հետապնդում ապահովել քաղաքացիական շրջանառության և գույքային հարաբերությունների կայունություն, պաշտպանել կողմերի իրավաչափ ակնկալիքները և կանխատեսելի դարձնել գործարքների իրավական հետևանքները: Այս փուլում իրավական որոշակիությունը ծառայում էր պարտավորությունների հստակ սահմանման և ներգրավված անձանց իրավունքների պաշտպանության նպատակներին՝ առանց հանրային իշխանության

գործունեության վրա ազդեցության:

Զարգացման երկրորդ՝ միջձյուղային փուլում, որը ընդգրկում է 19-րդ դարի վերջից 20-րդ դարի սկիզբը, որոշակիության սկզբունքը դուրս եկավ մասնավոր իրավունքի սահմաններից և արդեն ներառվեց հանրային իրավունքի մեջ՝ հատկապես քրեական, վարչական և ֆինանսական իրավունքի ձյուղերում: Քրեական իրավունքում այն արտահայտվեց «*nullum crimen sine lege certa*» նախապայմանով, որը պահանջում էր պատժի և արգելքի առավելագույն կանխատեսելիություն: Վարչական իրավունքում որոշակիության գաղափարը դարձավ պետական իշխանության հայեցողության սահմանափակման և վարչական գործողությունների կանխատեսելիության նախապայման: Իսկ օրինակ՝ Գերմանիայի (Maurer, 2021, էջ 155–178), Ֆրանսիայի (Weyl և ուրիշներ, 2019, էջ 231–250), Մեծ Բրիտանիայի ֆինանսական և հարկային օրենսդրություններում ձևավորվեց հետադարձ ուժի արգելքի և հարկատուի իրավաչափ ակնկալիքների պաշտպանության դոկտրինան՝ մասնավոր իրավունքի վստահության պաշտպանության սկզբունքի հրապարակայնացված տարբերակով (Craig, 2021, էջ 551–602):

Այսպիսով, միջձյուղային փուլը առաջացավ պետական իշխանության դերակատարության և վարչական գործունեության ընդլայնման արդյունքում: Քրեական, վարչական և հարկային իրավունքի ոլորտներում սկզբունքը կիրառվեց՝ սահմանափակելու պետական մարմինների ազատ հայեցողությունը և իրավունքի կանխատեսելիությունը: Այսպիսով, որոշակիությունը դառնում է հանրային իրավունքի պաշտպանության գործիք, քանի որ այն պաշտպանում է անհատի ակնկալիքները, թույլ չի տալիս անորոշ որոշումներ և ապահովում է պետական գործողությունների համաչափություն և կանխատեսելիություն:

Զարգացման երրորդ՝ Սահմանադրական փուլում, որը ընդգրկում է 20-րդ դարի երկրորդ կեսը, հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, որոշակիության սկզբունքը ստացավ սահմանադրական մակարդակի պաշտպանություն մի շարք երկրներում: Դրանցից կառանձնացնենք՝ Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի և մի շարք այլ երկրների Սահմանադրությունները: Այսպես, օրինակ՝ Ֆրանսիայի Սահմանադրության 34-րդ հոդվածով ամրագրված է, որ «Օրենքը պետք է կարգավորի բոլոր հիմնական հարցերը, հետևապես այն պետք է լինի որոշակի՝ հստակ ու կանխատեսելի»: Ինչպես նաև, Գերմանիայի Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Երբ օրենքը սահմանափակում է հիմնարար իրավունքները, ապա այն պետք է լինի որոշակի, հստակ ձևակերպված և չհակասի դրանց էությանը»:

Որոշակիության սկզբունքը ճանաչվեց որպես՝ իրավական պետության հիմնարար տարր, իրավական կարգավորման որակի սահմանադրական չափանիշ (Favier, 2010, էջ 412–420) և մարդու հիմնական իրավունքների պաշտպանության մեխանիզմ (Pierson, 1997): Սահմանադրական որոշակիությունը ներառում է՝ օրենքի որակի պահանջներ (հստակություն, հասանելիություն, կանխատեսելիություն), պետական իշխանության հայեցողության սահման-

նափակում, իրավաչափ ակնկալիքների պաշտպանություն, հետադարձ ուժով ծանրացնող նորմերի բացառություն, դատարանների դատական պրակտիկայի հետևողականություն և իրավական կայունություն:

Որոշակիության վերոնշյալ հատկանիշների հետ կապված իրավական մեկնաբանություններ է պարունակում նաև դատական պրակտիկան: Այսպես, օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր մի շարք վճիռներում արտահայտում է այն մոտեցումը, որ երբ օրենքի փոփոխությունը ծանրացնում էր պատժի չափը կամ ընդլայնում էր քրեական պատասխանատվությունը, ապա այդ օրենքը հետադարձ ուժ չի կարող ունենալ, քանի որ առաջնային դա կհակասի որոշակիության սահմանադրական սկզբունքին: *Scoppola v. Italy* (No. 10249/03, 17 սեպտեմբերի 2009) գործով ՄԻԵԴ-ը հաստատել է, որ ՄԻԵԿ 7-րդ հոդվածը ենթադրում է ոչ միայն ծանրացնող նորմերի վերաբերյալ արգելք, այլև հնարավորություն ավելի մեղմ օրենքի հետադարձ ուժի կիրառումը՝ որպես իրավական որոշակիության դրսևորում:

Pine Valley Developments Ltd and Others v. Ireland գործով ՄԻԵԴ-ը առաջին անգամ արձանագրեց իրավաչափ ակնկալիքի պաշտպանության անհրաժեշտությունը, որտեղ կրկին անդրադարձ կատարվեց իրավական որոշակիության սկզբունքի հետ հարաբերակցության հարցին: Նշենք նաև, որ Սահմանադրական փուլում սկզբունքը վերածվում է ոչ միայն իրավունքների պաշտպանության, այլև ամբողջ սահմանադրական համակարգի կառուցվածքային տարրի՝ սահմանելով պետական իշխանության գործառնական սահմանները և իրավակարգի ինստիտուցիոնալ պահանջները:

Որոշակիության սահմանադրական սկզբունքը որպես արժեք և դրա դրսևորումը Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավակարգում

Ժամանակակից սահմանադրական իրավունքում որոշակիության սկզբունքը հանդես է գալիս որպես՝ իրավական կարգավորման կայունության և կանխատեսելիության երաշխիք, պետական մարմինների գործողություններին հստակ սահմաններ նախատեսող սկզբունք, մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության նախապայման, օրենքի որակի (*quality of law*) սահմանադրական չափանիշ: Այն դարձել է ոչ միայն իրավական ապահովության ընդհանուր սկզբունք, այլև՝ սահմանադրական վերահսկողության գործիք (*Venice Commission*, 2012), որի միջոցով սահմանադրական դատարանները գնահատում են օրենքների հստակությունը, համապատասխանությունը և պետական մարմինների դատողության սահմանները:

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ Սահմանադրական փուլը պայմանավորված է իրավական պետության գաղափարի համաշխարհային ընդունմամբ, հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Սահմանադրության մակարդակում իրավական որոշակիության ապահովում է ոչ միայն անձանց իրավունքների պաշտպանություն, այլ նաև սահմանափակում է պետական իշխանության գործունեության շրջանակները, ամրագ-

րում օրենքի գերակայությունը, ապահովում կանխատեսելի դատավարություն և պաշտպանում մարդու հիմնարար իրավունքները: Այս փուլում այն դառնում է կառուցվածքային և սկզբունքային գործիք, ինչը չկար այն երկու փուլերում, որը համակարգում է ողջ իրավակարգը, ամրագրում ուժերի հավասարակշռությունը և, վերջապես, կանխարգելում իրավական անորոշությունը:

Որոշակիությունը էական նշանակություն ունի սահմանադրաիրավական գիտության մեջ, մասնավորապես՝ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որոշակիությունը օգտագործվում է որպես «սահմանադրական սկզբունք» և «սահմանադրական արժեք»:

Ինչ վերաբերում է որոշակիության, որպես սահմանադրական սկզբունքի, ապա դեռևս 19–20–րդ դարերի գերմանական իրավական դպրոցի տեսաբաններ՝ Ռուդոլֆ Ֆոն Յերինգը (von Jhering, 1877) և Հանս Կելզենը որոշակիության սահմանադրական սկզբունքը կապում էին իրավական անվտանգության և կանխատեսելիության հետ, նշելով, որ «Օրենքը պետք է լինի կանխատեսելի, դրա կիրառման արդյունքը պետք է հասկանալի լինի մինչև իրավական վարքագիծ դրսևորելը»: Կելզենը նաև ընդգծում էր, որ չի կարելի օրենքը չեղարկել հետին թվով, որպեսզի չխախտվի մարդկանց վստահությունը պետության նկատմամբ (Kelsen, 1945): Գտնում ենք, որ այս գաղափարը առավելապես պետք է արտացոլված լինի սահմանադրության մեջ՝ դարձնելով որոշակիությունը որպես սկզբունք: **Մեր գնահատմամբ դա կարող է արտահայտվել հետևյալ ձևակերպմամբ՝ «Բոլոր օրենքները պետք է լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի իրավընկալողը կարողանա հասկանալ այն, ինչպես նաև բավարար չափով հստակ և կանխատեսելի»:**

Հետաքրքրական է Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ջոն Ռոուլսի մոտեցումը, ով խոսելով որոշակիության սահմանադրական սկզբունքի մասին, այն կապում է արդարության սկզբունքի հետ՝ նշելով, որ օրենքը պետք է լինի այնքան հստակ և հասկանալի, որ քաղաքացիները կարողանան կանխատեսել իրենց գործողությունների հետևանքները և մասնակցել հասարակական կյանքին հավասար պայմաններով (Rawls, 1971): Հանս Բլումերն էլ որոշակիությունը դիտարկում է որպես օրենքի վստահելիության հիմք, կարևորելով, որ օրենքի պահանջները պետք է լինեն հասկանալի և կայուն, որպեսզի քաղաքացիները կարողանան հարմարեցնել իրենց վարքագիծը՝ ապահովելով իրավունքի գերակայությունը (Blumeur, 1959):

Հետաքրքրական մոտեցումներ են նաև առկա ռուս իրավական դոկտրինում: Վիտալի Գորդինի դիտարկմամբ՝ որոշակիության սահմանադրական սկզբունքը իրավունքի գերակայության բաղադրիչներից մեկն է և հանդիսանում է իրավական պետության հիմքային սկզբունքներից մեկը: Որոշակիության սահմանադրական սկզբունքը՝ որպես իրավունքի գերակայության բաղադրիչ, նախևառաջ նշանակում է նորմատիվ ակտերի հիմքերի, նպատակների և բովանդակության հստակության պահանջը, հատկապես այն նորմերի, որոնք ուղղակիորեն վերաբերում են մարդուն: Անհատը պետք է

կարողանա կանխատեսել իր վարքագծի իրավական հետևանքները (Gordiev, 2023, էջ 23):

Վլադիմիր Կաբիշևի կարծիքով էլ, որոշակիության սահմանադրական սկզբունքը սերտորեն կապված է իրավական ակտերի հասկանալիության հետ հասարակության համար, և ըստ Կաբիշևի՝ «Եթե օրենքը հասկանալի չէ քաղաքացուն, ապա չի կարող ապահովել ոչ կանխատեսելիություն, ոչ վստահություն իրավական համակարգի նկատմամբ» (Кабышев, 2018, էջ 45-52): Նույնաբովանդակ մոտեցում ունի սահմանադրագետ Անդրեյ Ստրաշունը, ըստ որի «Որոշակիության սահմանադրական սկզբունք ասելով հասկանում ենք, որ օրենքը լինի հստակ, հասկանալի և կանխատեսելի: Այն թույլ է տալիս քաղաքացիներին կանխատեսել իրավական հետևանքները և համապատասխանեցնել իրենց վարքագիծը նորմերին» (Страшун, 2015):

Մեր կարծիքով որոշակիության որպես սահմանադրական սկզբունքի վերլուծությունը միայն մարդու հիմնարար իրավունքների համատեքստում դիտարկելը միակողմանի է, քանի որ այս սկզբունքին համապատասխան վարքագիծ դրսևորելու անհրաժեշտություն ունի նաև պետական իշխանությունը, որպես իրավունքների հասցեատիրոջ: Իրավական նորմերը բավարար չափով որոշակի պետք է լինեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց համար, որպեսզի իրենք ևս ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Այս առումով համակարծիք ենք լուս սահմանադրագետ Բատուրինի հետ, ով ևս ընդգծում է, որ որոշակիությունը չի սահմանափակվում նորմատիվ ակտերի հստակությամբ, այլ ներառում է նաև պետական մարմինների գործողությունների կանխատեսելիությունը (Батурин, 2016):

Օկսանա Ժուռավլևայի գնահատմամբ, որոշակիության սահմանադրական սկզբունքը դիտարկվում է որպես սկզբունք, որը արտահայտում է իրավական կարգավորման որոշակիության հիմքային գաղափարը և պահանջը՝ որպես ամբողջություն, և այն դրսևորվում է իրավական կարգավորման բոլոր բաղադրիչներում: Այս պատճառով անհրաժեշտ է, որ իրավական նորմերը և անհատական ակտերը համապատասխանեն հետևյալ չափանիշներին՝ հստակություն, ճշգրտություն, միանշանակություն և հակասությունների բացակայություն: Նորմատիվ իրավական ակտերում գործողությունների կարգը պետք է լինի հստակ, իրավահարաբերությունները՝ կայուն, իսկ իրավակիրառ և իրավաիրականացման ակտերը՝ հաստատուն (Журавлёва, 2024): Սրանք դիտարկելով, որպես իրավական անվտանգության և մարդու ու քաղաքացիների իրավունքների պաշտպանության երաշխիք:

Հայ իրավաբան-գիտնականները ևս կարևորում են որոշակիության սահմանադրական սկզբունքի կարևորությունը, մասնավորապես՝ իրավական անվտանգության և մարդու ու քաղաքացիների իրավունքների պաշտպանության երաշխիքների տեսանկյունից: Բավականին հետաքրքրական մեկնաբանություններ ունի Սերգեյ Ավագյանը, ով նշում է, որ որոշակիությունը պետք է դիտարկել որպես իրավական պետության կառուցման հիմնասյու-

ներից մեկը, քանի որ «Որոշակիությունը թույլ է տալիս խուսափել կամայականությունից և ապահովում է օրենքի կիրառման միանմանությունը, որովհետև որոշ նորմերը վտանգեն ներկայացնում սահմանադրականության համար» (Ավագյան, 2014):

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալ իրավագետ-գիտնականների դոկտրինալ մեկնաբանությունները և նորմատիվ-իրավական կարգավորումները «որոշակիության» սահմանադրական սկզբունքի վերաբերյալ, կարող ենք եզրահանգել, որ որոշակիության սահմանադրական սկզբունքը համադրելի է իրավունքի գերակայության, վստահության պաշտպանության և իրավական պետության ինստիտուցիոնալ կայունության հետ: Այն պահանջում է, որ օրենքները լինեն ոչ միայն հստակ ձևակերպված, այլ նաև կիրառվեն կանխատեսելի կերպով՝ հասանելի լինեն հասարակությանն իր ողջ բազմազանությամբ: Այս սկզբունքը կոչված է պաշտպանելու քաղաքացուն կամայական պետության դեմ, և հանդիսանում է սահմանադրական արդարադատության առանցքային գործիքներից մեկը: Որոշակիության սահմանադրական սկզբունքը՝ պաշտպանում է անհատի ինքնավարությունը, քանի որ միայն կանխատեսելի նորմերն են հնարավորություն տալիս անձին՝ կայացնել ազատ և տեղեկացված որոշումներ, խթանում է ժողովրդավարական հաշվետվողականությունը, քանի որ օրենսդիր մարմինները պարտավոր են օրենքներ ընդունել պատասխանատվությամբ, ինչպես նաև կանխում է իշխանության կամայականությունը, ամրապնդելով իշխանությունների տարանջատումը և դատական անկախությունը:

Ինչ վերաբերում է որոշակիությանը, որպես «սահմանադրական արժեքի» գաղափարին, ապա դա սահմանադրական իրավունքի հիմնարար թեմաներից է, քանի որ այն ուղղակիորեն առնչվում է իրավական պետության, օրենքի գերակայության և մարդու իրավունքների երաշխավորման հիմքերին: Ըստ Վենետիկի հանձնաժողովի համապատասխան բանաձևի վերլուծության, որոշակիությունը սահմանադրաիրավական արժեք է, քանի որ այն բխում է երեք առանցքային սկզբունքից՝ իրավունքի գերակայության, իրավական հավասարության և արդարության ու իրավական կանխատեսելիության սկզբունքներից (Venice Commission, 2012):

Ֆրիդրիխ ֆոն Հայեկի դիտարկմամբ որոշակիությունը, որպես սահմանադրական արժեք՝ ապահովում է արդարություն, պետության օրինականություն, քաղաքացիների վստահություն իշխանության նկատմամբ ու իրավական անվտանգություն: Երբ որոշակիությունը խախտվում է, իրավունքի գերակայությունը և պետության նկատմամբ վստահությունը թուլանում են (Hayek, 1960): Նմանաբովանդակ մոտեցման ենք հանդիպում նաև Թոմ Բինգհեմի իրավափիլիսոփայական աշխատությունում, ով ևս որոշակիությունը՝ որպես սահմանադրական արժեքի կարևորությունը դիտարկում է իրավունքի գերակայության ապահովման տեսանկյունից (Bingham, 2010):

Իրավաբան Ումբերտո Ալիլայի ձևակերպմամբ էլ, որոշակիությունը արժեք է, քանի որ այն դրսևորվում է արդարության և հասարակության խաղաղության հետ միասին՝ ցանկացած իրավական համակարգ: Որոշակիությո-

յան ըմբռնումը որպես իրավունքի գաղափարի արդյունք պայմանավորում է դրա արդյունավետությունը՝ որպես իրավունքի համար որոշակիության և արդյունավետության ձևավորող արժեք (Avilla, 2016, էջ 144–145) :

Հետազոտող Լվովան նույնպես նշում է, որ որոշակիությունը սահմանադրական իրավունքի տեսաբանության մեջ պետք է ընկալել ոչ միայն որպես գործիքային սկզբունք, այլ որպես սահմանադրական արժեք, որն ամրապնդում է իրավական պետությունը, պաշտպանում է մարդու արժանապատվությունը և ապահովում է վստահելի սահմանադրական կարգ: Այն դառնում է սահմանադրականության հենասյուն՝ կապելով արդարությունը, կանխատեսելիությունը և կայունությունը (Lvova, 2024, էջ 328–339):

Որոշակիությունը՝ որպես արժեք ամրագրված է նաև որոշ երկրների Սահմանադրություններում: Այսպես, Բրազիլիայի սահմանադրության նախաբանում նշված **segurança** (ապահովվածություն, իրավական կայունություն/որոշակիություն) եզրույթը դիտարկվում է միանշանակ սոցիալական արժեք: Սահմանադրությունը հստակ սահմանում է՝ այն ստեղծում է ժողովրդավարական պետություն՝ նպատակ ունենալով ապահովել որոշակիությունը որպես արժեք: Այս արտահայտությունը նշանակում է որոշակիության կիրառումը օրենքի միջոցով, քանի որ օրենքները պետք է ծառայեն որպես միջոց որոշակիությունը (կամ անվտանգությունը) երաշխավորելու համար:

Բրազիլիայի Սահմանադրության 5-րդ հոդվածի ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ նախ և առաջ «որոշակիությունը» (*segurança*) ամրագրվում և կիրառվում է որպես սահմանադրական արժեք կրող սկզբունք, քանի որ նախաբանում, և 5-րդ հոդվածի բացման պարբերությունում նշված “*segurança*”-ի երաշխավորումը իրականում նշանակում է՝ իրավական որոշակիության պաշտպանություն՝ որպես օրենքի որոշակիություն և որպես որոշակիություն՝ օրենքի միջոցով: Այսինքն՝ այն քաղաքացու պաշտպանությունն է պետությունից, որը պետք է իրականացվի հենց պետության կողմից՝ կանոնների, ակտերի և ընթացակարգերի միջոցով, այնպես, որ որոշակիությունը վերածվի և՛ անհատական իրավունքի, և՛ սոցիալական արժեքի:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ևս որոշակիությունը դրսևորվում է, որպես սահմանադրական արժեք ներկայացնող սկզբունքի: Համաձայնելով վերոշարադրյալ դիրքորոշումների հետ, մեր գնահատմամբ, որոշակիությունը սահմանադրաիրավական արժեք է, քանի որ ապահովում է մարդու արժանապատվության պաշտպանությունը, քանի որ անհատը չպետք է ապրի անորոշության մեջ՝ չիմանալով իր իրավունքների և պարտականությունների չափը, ինչպես նաև այն արժեք է սահմանադրական կայունության և պետության հանդեպ վստահության տեսանկյունից, և, նաև, նպաստում է ժողովրդավարության հաստատմանը, իշխանության սահմանափակմանը ու կամայականության բացառմանը: Միջազգային իրավունքի համատեքստում՝ կանխատեսելիությունն ու հասկանալիությունը դիտարկվում է որպես մարդու հիմնարար իրավունքների իրացման նախապայման (Rawls, 1971, էջ 120): Վերոնշյալ դիտարկումների հիման

վրա կարող ենք եզրահանգել, որ որոշակիությունը հանդիսանում է սահմանադրական արժեք, քանի որ այն՝ նպաստում է հասարակական հարաբերությունների կայունությանը, երաշխավորում է իրավունքի գերակայության իրականացումը և ծառայում է որպես **սահմանադրական ինքնության բաղադրիչ**:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետությունում որոշակիության եզրույթը սահմանվում է Սահմանադրությամբ: Այն Մայր օրենքում հիշատակվում է երկու անգամ, առաջին՝ որպես «իրավական որոշակիության սկզբունք» և, որպես, «որոշակիության սկզբունք»:

«Իրավական որոշակիության սկզբունք» եզրույթը հիշատակվում է սահմանադրական կարգի հիմունքները գլխի, 6-րդ հոդվածի՝ «Օրինականության սկզբունք» վերտառությամբ հոդվածի երկրորդ կետում, որպես Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կողմից ընդունվող ենթաօրենսդրական ակտերում առկա լիազորող նորմերին ներկայացվող պահանջի: Իսկ «որոշակիության սկզբունքը» ամրագրված է «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների»-ի վերաբերող երկրորդ գլխի 79-րդ հոդվածում որպես իրավունքների և ազատությունների սահմանափակման պահանջի (ՀՀ Սահմանադրություն, հոդ.՝ 6-րդ և 79-րդ):

Մեր գնահատմամբ ՀՀ Սահմանադրության մի շարք այլ նորմերի բովանդակության ուսումնասիրությունից կարող ենք բխեցնել, որ թեպետ որոշակիությունը ուղղակիորեն ամրագրված չէ նրանցում, սակայն այն ընկալվում է և՛ որպես սահմանադրական արժեք, և՛ որպես սահմանադրական սկզբունք, ինչն էլ ցցուն կերպով արտահայտված է Սահմանադրության 1-ին հոդվածում. «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է»:

Որոշակիությունը, որպես սահմանադրական սկզբունք սերտորեն կապված է ինքնիշխան և ժողովրդավարական պետության հետ, քանի որ այն անհնար է առանց որոշակիության և այն կախված է քաղաքացիների ազատության, սոցիալական իրավունքների, վստահության երաշխիքից, հստակությունից և կայունությունից:

Առհասարակ, իրավագիտության տեսանկյունից որոշակիությունը հանդիսանում է ինքնիշխան պետության հիմնարար սկզբունքներից մեկը: Այն ապահովում է իրավական համակարգի կանխատեսելիությունը, կայունությունը և վստահությունը՝ միաժամանակ սահմանափակելով իշխանության կամայական իրականացումը: Այսպես, որոշակիությունը հիմնավորում է ինքնիշխանության իրականացման օրինականությունը, քանի որ ապահովում է, որ պետական իշխանությունը գործի ոչ թե կամայականորեն, այլ՝ իրավունքի շրջանակներում: Ըստ իրավագետ Դայսի՝ որոշակիությունը երաշխավորում է, որ ինքնիշխանությունը իրացվում է օրենքի միջոցով, այլ ոչ թե նրա վերևում, ինչպես նաև բարձրացնում է պետական որոշումների լեգիտիմությունը և սահմանում է իշխանության սահմաններ՝ կանխելով կամայականությունները (Dicey, 1959, էջ 181–183):

Միջազգային մակարդակում որոշակիությունը խարսխում է պետության

իրավական հեղինակությունը, քանի որ հակառակ պարագայում, իրավական անորոշությունը նվազեցնում է պետության ինքնիշխան հավասարությունը, քանի որ այն կոժվարացնի միջազգային պարտավորությունների վստահելի կատարումը (Shaw, 2017, էջեր՝ 488–492): Ուստի որոշակիությունը հանդիսանում է իրավական ինքնիշխանության պայման՝ ապահովելով պետության կամքի կայուն և հետևողական արտահայտումը միջազգային հարթությունում, ինչպես նաև ձևակերպում է պետական կամքը՝ որպես իրավական, ոչ թե քաղաքական կամ ուժային երևույթ: Ինչպես արդարացիորեն նշում է միջազգային իրավունքի մասնագետ Մալքոլմ Շոուն իրավական որոշակիությունը նաև արտաքին ինքնիշխանության նախապայման է, քանի որ պետության միջազգային հեղինակությունը բխում է նրա ներքին իրավական կայունությունից (Shaw, 2017, էջ 488–492):

Ինչ վերաբերում է ժողովրդավարական պետության սահմանադրական բնութագրիչի հետ որոշակիության սկզբունքի կապին, ապա այն հիմնվում է այն հիմնադրույթի վրա, որ իշխանությունը սահմանափակված է իրավունքի միջոցով, և քաղաքացիներն ունեն իրավունքի նկատմամբ վստահություն: Այս համոզմունքը չի կարող գոյություն ունենալ, եթե օրենքը անորոշ է, փոփոխական, կամայականորեն մեկնաբանվող կամ անհասանելի: Հետևաբար՝ որոշակիության սկզբունքը ժողովրդավարական պետության ոչ թե տեխնիկական, այլ գոյաբանական պայմանն է: Այն ապահովում է ոչ միայն նորմատիվ հստակություն, այլ քաղաքացի-պետություն հարաբերությունների կանխատեսելիություն: Ժողովրդավարական պետությունը ենթադրում է՝ իրավունքի գերակայություն՝ ոչ թե իշխանության գերակայություն, քաղաքացիների իրավական հավասարություն, քաղաքական մասնակցություն՝ իրավական երաշխիքներով և իրավական պետության կանխատեսելիություն և վստահություն (Fichsors, 2019, էջ 143–160):

Որոշակիության սահմանադրական սկզբունքը սերտորեն և ցայտուն երևում է նաև սոցիալական պետության սահմանադրական մոդելում, ըստ որի՝ պետությունն ունի ոչ միայն «չմիջամտելու պարտավորություն», այլ նաև ակտիվ սոցիալական ապահովման և հավասարության առաջխաղացման պարտավորություն: Սակայն սոցիալական իրավունքները կիրարկելի են միայն այն դեպքում, երբ քաղաքացիները գիտեն, կանխատեսում և վստահում են, թե ինչպես է պետությունն իրականացնում այդ պարտավորությունները:

Այստեղից կարող ենք բխեցնել, որ որոշակիությունը սոցիալական պետության գործունեության պայման է, քանի որ ապահովում է սոցիալական իրավունքների իրացման կանխատեսելիություն և հավասարություն: Որոշակիությունը սոցիալական պետության մեջ ապահովում է՝ սոցիալական իրավունքների հստակ բովանդակություն, հավասար հասանելիություն (ոչ թե վարչական կամայականություն), քաղաքացիների վստահություն պետական համակարգի նկատմամբ, ինչպես նաև սոցիալական քաղաքականության իրավականության մակարդակ (Սաֆարյան և Մալխասյան, 2022, էջ 67–76):

Այսպիսով, որոշակիության սկզբունքը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված պետության մոդելի կառուցվածքային հիմքը, քանի որ այն ապահովում է՝ ժողովրդավարական պետության գաղափարի գործառնությանն (քաղաքացու իրավունքների կանխատեսելի իրացում), և սոցիալական պետության գաղափարի նյութական իրականացումը (սոցիալական իրավունքների իրավական երաշխավորվածություն): Առանց որոշակիության՝ սահմանադրական պետության հռչակումը մնում է հայտարարված, սակայն ոչ իրագործված բնույթով»:

Որոշակիության սկզբունքի կապը իրավական պետության սահմանադրական բնութագրիչի հետ դրսևորվում է նրանում, որ այն պահանջում է, որ պետական բոլոր մարմինները գործեն օրենքի սահմաններում, իսկ քաղաքացիները կարողանան վստահ լինել իրենց իրավունքների պաշտպանությանը: Այստեղ որոշակիությունը կարևոր է նրանով, քանի որ այն ապահովում է պետական գործողությունների կանխատեսելիությունը, երաշխավորում է իրավահավասարությունը և պաշտպանում է հիմնական իրավունքները, քանի որ անհատը պետք է ի վիճակի լինի կանխատեսել իր գործողությունների իրավական հետևանքները:

ՀՀ Սահմանադրական դատարանը նույնպես որոշակիությունը դիտում է որպես իրավական պետության առանցքային տարր, նշելով, որ այն պայման է՝ «իրավունքի գերակայության գործնական իրացման համար» (ՀՀ ՍԴ որոշում № ՍԴՈ-997, 2020): Այս որոշմամբ ամրագրվում է, որ առանց որոշակիության հնարավոր չէ ապահովել ոչ իրավական անվտանգության, ոչ պետական իշխանության հաշվետվողականության, և ոչ էլ մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանություն:

Հետևաբար՝ կարող ենք եզրահանգել, որ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը ընդգրկում է պետության նորմատիվ ինքնությունը՝ որպես միասնություն, որտեղ պետության հատկանիշները փոխլրացնող են: Այս դրույթով սահմանադրությունը ոչ միայն հաստատում է պետական իշխանության ինքնուրույնությունը արտաքին հարաբերություններում, այլև նորմատիվ սահմանափակում է այդ իշխանությունը ներքին մակարդակում՝ իրավունքի միջոցով: Այստեղ է, որ իրավական որոշակիությունը հանդես է գալիս որպես համակարգային սկզբունք, որը միաժամանակ՝ ապահովում է իշխանության կայուն իրացումն ու շարունակականությունը, սահմանափակում է այն՝ կանխելով կամայականությունը, ինչպես նաև ձևավորում է իրավական վստահություն և կանխատեսելիություն հասարակական հարաբերություններում: Այլ կերպ ասած՝ որոշակիությունը այն նորմատիվ շղթան է, որով ինքնիշխանությունը ենթարկվում է իրավունքի գերակայությանը, և հենց այդ ենթարկման արդյունքում է, որ ինքնիշխանությունը ստանում է լեգիտիմ բնույթ:

Եզրակացություն

Ամփոփելով կատարված ուսումնասիրությունը, կարող ենք եզրահանգել՝ որ, որոշակիության սկզբունքը պատմականորեն ձևավորվել է մասնավոր իրավունքի շրջանակում՝ ապահովելով գործարքների կանխատեսելիությունը:

նը, սեփականության պաշտպանությունը և իրավահարաբերությունների կայունությունը: Ժամանակի ընթացքում այն վերաճեց միջճյուղային՝ ընդգրկելով հանրային իրավունքի ոլորտները՝ քրեական, վարչական և հարկային, իսկ 20-րդ դարի երկրորդ կեսից ստացավ սահմանադրական մակարդակի պաշտպանություն՝ դառնալով իրավական պետության և մարդու իրավունքների երաշխիքների առանցքային գործիք: Ըստ իրավաբանական դոկտրինների՝ որոշակիությունը համադրելի է իրավունքի գերակայության, կանխատեսելիության և օրենքի հստակության հետ: Այն սահմանափակում է պետական մարմինների ազատ հայեցողությունը, պաշտպանում քաղաքացու իրավաչափ ակնկալիքները և ապահովում պետական գործողությունների կանխատեսելիությունը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ որոշակիությունը համարվում է մարդու հիմնարար իրավունքների արդյունավետ պաշտպանության նախապայման, ինչպես արտացոլված է ՄԻԵԴ-ի պրակտիկայում և միջազգային իրավունքի մոտեցումներում:

Որոշակիությունը հանդես է գալիս երկու, իրողաբար համակցվող՝ **սահմանադրական սկզբունք և սահմանադրական արժեք** կարգավիճակներով: Սահմանադրական սկզբունքը սահմանում է պետության, պետական մարմինների և դատական իշխանության գործունեության կադապարները՝ ապահովելով օրենքի գերակայություն և կանխատեսելիություն, մինչդեռ արժեքը արտահայտվում է իրավական անվտանգության, քաղաքացիների վստահության և սոցիալական իրավունքների երաշխավորման միջոցով:

Արդյունքում, իրավական որոշակիությունը համարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կառուցվածքային և ինստիտուցիոնալ առանցքային սկզբունք. այն ապահովում է օրենքի հստակությունը, կանխատեսելիությունը, իրավահավասարությունը և պաշտպանությունն անհատական իրավունքների նկատմամբ, ինչպես նաև ամրապնդում է պետական իշխանության լեգիտիմությունը և հաշվետվողականությունը: Այսպիսով, որոշակիությունը որպես սահմանադրական սկզբունք և սահմանադրական արժեք միաձուլվում է՝ ծառայելով թե պետության սահմանադրական կարգի հիմնադրույթների ամրապնդմանը, թե անհատի իրավական պաշտպանությանը և հասարակական հարաբերությունների կայունությանը:

Օգտագործված գրականության ցանկ

Սաֆարյան, Գ., Մալխասյան, Լ. (2022). Սոցիալ-իրավական պետության հայեցակարգը սահմանադրականության տեսանկյունից. *Հասարակագիտական Միությունի Ժամանակաշրջանում*, Գիրք XII, 67–76:

Авакьян, С.А. (2021). Конституционное право России. Учебный курс. В 2-х томах.

Кабишев, В. Т. (2018). Понятие правовой определённости. *Право и государство*, № 4, 45–52.

Кофанов, Л. Л. (2002). *Дигесты Юстиниана*, т. 2, Москва.

Рехтина, И. В. (2022). *Истоки принципа правовой определённости (Res judicata) в законодательстве Древнего Рима*.

Хрестоматия по всеобщей истории государства и права (2006). Под ред. К.И. Батыра,

- Е.В. Поликарповой, т. 1, Москва.
- Хрестоматия по истории древнего Рима* (1962). Под ред. С.Л.Утченко. М.
- Alexy, R. (2002). *A theory of constitutional rights*. Oxford University Press.
- Ávila, H. (2016). Certainty in law. In *Law and philosophy library: Foundations in the constitutional structure*. Springer.
- Ávila, H. (2016). *Teoria da segurança jurídica* (4th ed.). Malheiros Editores.
- Bingham, T. (2010). *The rule of law*. Penguin Books.
- Blumer, H. (1959). *Recht und Ordnung*. Springer-Verlag.
- Craig, P. (2021). *Administrative law* (9th ed.). Oxford University Press.
- Dicey, A. V. (1959). *Introduction to the study of the law of the constitution*. Macmillan.
- du Plessis, P. (2005). *Borkowski's textbook on Roman law* (4th ed.). Oxford University Press.
- Favier, L. (2010). *Droit constitutionnel*. Dalloz.
- Fichsor, K. (2019). The uncertain concept of legal certainty. *Hungarian Journal of Legal Studies*, 60(2), 143–160.
- Gordiev, V. (2023). Legal nature of the principle of legal certainty as a component element of the rule of law. *Juridical Tribune*, 13(1), 23.
- Gordley, J. (1991). *The philosophical origins of modern contract doctrine*. Cambridge University Press.
- Halpérin, J.-L. (2012). *The French civil code* (pp. 35–78). Oxford University Press.
- Hayek, F. A. (1960). *The constitution of liberty*. University of Chicago Press.
- Kelsen, H. (1945). *General theory of law and state*. Harvard University Press.
- Lacey, N. (2016). *In search of criminal responsibility* (pp. 101–142). Oxford University Press.
- Lvova, O. L. (2024). Legal certainty as a value component of quality lawmaking. *Almanac of Law*, 15, 328–339.
- Maurer, H. (2021). *Allgemeines Verwaltungsrecht* (19th ed., pp. 155–178). C.H. Beck.
- Pine Valley Developments Ltd v Ireland*, App no. 12742/87, 29 November 1991, Series A no. 222, 51.
- R v Secretary of State for the Home Department, ex p. Pierson [1997] UKHL.
- Rawls, J. (1971). *A theory of justice* (p. 120). Harvard University Press.
- Shaw, M. N. (2017). *International law* (8th ed., pp. 488–492). Cambridge University Press.
- Strashun, A. M. (2015). *Osnovy pravovoy sistemy: Uchebnoe posobie*.
- Venice Commission. (2012). *Report on the rule of law* (CDL-AD (2011)003rev).
- Weyl, P. (2019). *Droit administratif*. Dalloz.
- Zimmermann, R. (1996). *The law of obligations: Roman foundations of the civilian tradition*. Oxford University Press.
- Zimmermann, R. (2012). The German civil code and the development of private law. In *The Oxford handbook of European private law* (pp. 463–485). Oxford University Press.

Смбат Минасян

*Член Адвокатской палаты Республики Армения,
аспирант кафедры права, политологии и международных отношений
Международного университета Евразия
Эл. адрес: smbmin85@mail.ru*

КОНСТИТУЦИОННЫЙ ПРИНЦИП ПРАВОВОЙ ОПРЕДЕЛЁННОСТИ: СУЩНОСТЬ, ПРАВОВОЕ СОДЕРЖАНИЕ, МЕСТО И ЗНАЧЕНИЕ В СИСТЕМЕ КОНСТИТУЦИОННЫХ ПРИНЦИПОВ И ЦЕННОСТЕЙ

В статье проводится комплексный анализ понятия «правовая определённость» как конституционного принципа и конституционной ценности. Исследование раскрывает теоретические и юридические основы правовой определённости, прослеживая её формирование от частного права до институциональной роли в современном конституционном праве. Рассматриваются три этапа развития правовой определённости: частноправовой, межотраслевой и конституционный. Представлены проявления принципа в различных правовых системах и судебной практике, с особым вниманием к прецедентам Европейского суда по правам человека. Особое внимание уделяется роли и значению правовой определённости в конституционном порядке Республики Армения, в статье она рассматривается как структурный фундамент правового государства, демократии, социального государства и суверенитета. В статье обосновывается тезис о том, что правовая определённость является не только инструментальным принципом, но и компонентом конституционной идентичности и предпосылкой эффективной защиты фундаментальных прав человека.

Ключевые слова: правовая определённость, правовая предсказуемость, конституционный принцип, конституционная ценность, правовая прогнозируемость.

Smbat Minasyan

*Member of the Bar Association of the Republic of Armenia,
Ph.D. Student of Law, Political Science, and International
Relations Department at Eurasia International University
Email: smbmin85@mail.ru*

THE CONSTITUTIONAL PRINCIPLE OF LEGAL CERTAINTY: ESSENCE, LEGAL CONTENT, AND ROLE WITHIN CONSTITUTIONAL PRINCIPLES AND VALUE SYSTEMS

This article undertakes a comprehensive analysis of the concept of “legal certainty” as both a constitutional principle and a constitutional value. The study

explores the theoretical and legal foundations of legal certainty, tracing its development from private law to its institutional role in contemporary constitutional law. The article examines three stages of the development of legal certainty: private-law, cross-sectoral, and constitutional. It presents manifestations of the principle across various legal systems and case law, with particular attention to the jurisprudence of the European Court of Human Rights. Special focus is given to the role and significance of legal certainty within the constitutional framework of the Republic of Armenia, considering it a structural foundation for the rule of law, democracy, the social state, and sovereignty. The article argues that legal certainty is not merely an instrumental principle but also a component of constitutional identity and a prerequisite for the effective protection of fundamental human rights.

Key words: legal certainty, legal predictability, constitutional principle, constitutional value, legal foreseeability

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. նոյեմբերի 3-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. նոյեմբերի 7-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. դեկտեմբերի 19-ին: